

2024

## ԲԱԶՄԱՏՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱԶՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆՑԱՑ  
ՓՈՂՈՑ 73

ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
/լրամշակված/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ՄԱՏՈՒՐՆԱՎԱՆ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 86/2  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱԶՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑ 73

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
/լրամշակված/

«ՄԱՏՈՒՐՆԱՎԱՆ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	5
1.2	Հապավումներ .....	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	7
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	10
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i> .....	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i> .....	11
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵՆՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱ .....	14
2.1	<i>Շինարարության կազմակերպչատեխնոլոգիական սխեմա</i> .....	16
Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են .....		17
2.2	<i>Շինարարության ժամկետները</i> .....	18
2.3	<i>Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը</i> .....	19
2.4	<i>Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները</i> .....	19
<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i> .....		20
2.5	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը</i> .....	21
2.6	<i>Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության պահանջներ</i> .....	21
2.6.1	<i>Գլխավոր հատակագիծ հատկացված հողամասի ուրվագծում</i> .....	23
2.6.2	<i>Իրադրային հատակագիծ</i> .....	26
2.6.3	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց</i> .....	28
2.6.4	<i>Շինհրապարակի հատակագիծ</i> .....	29
3.	ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՄԱՍ .....	35
3.1	<i>Էլ. մատակարարում</i> .....	35
3.2	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում</i> .....	37
3.2.1	<i>Օդափոխություն</i> .....	39
3.2.2	<i>Կանաչապատման աշխատանքներ</i> .....	42
3.2.3	<i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ</i> .....	43
4.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	44
4.1	Ընդհանուր տվյալներ տարածքի մասին .....	44
4.1.1	Ջրային ցանցը: .....	45
4.1.2	Կլիմա .....	45
4.1.3	Սեյսմա-տեկտոնական բնութագիրը: .....	49
4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը .....	49
4.3	Հիդրոերկրաբանական պայմանները .....	50
4.4	Կենսաբազմազանություն .....	50

4.4.1	Բուսական աշխարհ	51
4.4.2	Կենդանական աշխարհ	52
4.4.3	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները	53
4.4.4	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	54
4.5	Օդային ավազան	55
4.6	Ջրային ռեսուրսներ	59
4.7	Թափոնների կառավարում	60
4.8	Բնության հուշարձաններ	61
4.9	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	63
4.10	Պատմության և մշակույթի հուշարձաններ	63
5.	ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԿԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	69
	ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	69
5.1	Բնակչություն	69
5.2	Բնակելի կառուցապատում	69
5.3	Հասարակական սպասարկման համակարգ	70
5.4	Տնտեսության ոլորտները	73
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	74
6.1	Ռիսկերի գնահատում	74
6.2	Արտանետումների աղբյուրները	74
6.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	74
6.3.1	Մթնոլորտային օդ	74
6.3.2	Ջրային ռեսուրսներ	75
6.3.3	Հողային ռեսուրսներ	75
6.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	76
6.3.5	Հակահրդեհային միջոցառումներ	77
6.3.6	Աղմուկ և թրթռում	78
6.3.7	Կենսաբազմազանություն	78
6.3.8	Թափոնների կառավարում	78
6.3.9	Տարածքի բարեկարգում կանաչապատում	79
6.3.10	Էներգային այրողության միջոցառումներ	79
7.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	80
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	82
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	83
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	62
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	63

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Պատվիրատու՝	«ՄԱՏՈՒՐՆԱՎԱՆ» ՍՊԸ
Ձեռնարկող՝	«ՄԱՏՈՒՐՆԱՎԱՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Պռոշյան փ. 1-ին նրբ., 20/29
Նախատեսվող գործունեության հասցեն՝	Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր Պահլավունյաց փողոց 73
Աշխատանքային նախագծի մշակող՝	«ԿԱՐՊԵՏ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
ՇՄԱԳ նախագծի մշակող՝	Ա/Ձ Արամ Գալոյան Հեռ. +374 99 994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց 73 հասցեում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ բնակելի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության գնահատման փուլում Ծաղկաձոր քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

#### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց 73 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ 121) ենթակետը ձևակերպել հետվյալ կերպ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: Ջրային հարաբերություններ՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ,



սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

*«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք* (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք* (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Նախագծման համար ուղեցույց ծառայել նաև հետևյալ հետևյալ իրավական ակտերը.

- *«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),*
- *ՀՀ Ջրային օրենսգիրքը (ՀՕ-373, 04.06.2002թ.)*
- *«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),*
- *«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),*
- *ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի Ա71-Ն որոշում,*
- *ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի Ա72-Ն որոշում,*
- *ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» հ1 967-Ն որոշում,*
- *ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների*

*ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,*

*«Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N 781-Ն որոշումը*

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր Պահլավունյաց փողոց 73 հասցեում:

**Հողամասի բնութագրերը`**

- Կադաստրային ծածկագիրը` 07-005-0016-0246
- Մակերեսի չափը (հա)` 3.929125
- Նպատակային նշանակությունը` բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` Բնակելի կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը` ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողատարածքը ազատ է կառուցապատումից, ունի մեղմ ռելեֆ, հարևանությամբ շենք-շինությունները բացակայում են:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ առկա չեն, ծառատեսակներ առկա չեն, ծառահատումներ չի նախատեսվում:

Ըստ երկրաբանական հետազննության արդյունքների տարածքը, ընդհանուր առմամբ, պիտանի է շինարարության համար:

Գործունեության ենթակա տարածքի հարևանությամբ են գտնվում բնակելի և հասարակական շենք-շինություններ, տարածքը արդեն իսկ ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների:

Հայցվող տարածքի հյուսիս – արևմտյան և հյուսիս – արևելյան հատվածները համընկնում են Հրազդան գետ թափվող վտակի մի հատվածի հետ: Հողատարածքի եզրագծից մինչ վտակ ընկած ամենամոտ հեռավորությունը կազմում է 2.5մ, ամենահեռուն 12մ, իսկ շինության հեռավորությունը վտակից ամենամոտ տեղամասում կազմում է 17մ:

Կառուցապատման ենթակա տարածքում առկա չեն «ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N1793-Ն որոշմամբ սահմանված պատմության և մշակույթի հուշարձաններ:

Տարածքում հողաբուսաշերտի հզորությունը գնահատվում է 0,2 – 0,42մ: Հանվող բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 4650մ<sup>3</sup>:

**1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր**

Կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում Ծաղկաձոր քաղաքի Պահլավունյանց փողոց 73 հասցեում: Նախագծվող բազմաբնակարան բնակելի համալիրը տեղակայված է Ծաղկաձոր քաղաքի մուտքի հատվածում՝ դրանով իսկ հանդիսանալով շատ կարևոր տեսողական պատկեր ամբողջ շրջանի համար:

Հողատարածքը ունի թեքություն՝ նիշերի առավելագույն տատանումը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք կազմում է մոտ 2,1 մ:

Հողատարածքում նախատեսված է սպասարկման ներբակային ճանապարհ, բացօդյա ավտոկայանատեղի, մանկական խաղահրապարակ և մարզահրապարակ:

Համալիրի ճարտարապետական և գեղարվեստական լուծումները նախատեսում են ժամանակակից, դինամիկ և հմայիչ ճարտարապետական կերպարի ստեղծում, որը կզարգացնի և կլրացնի շրջակա կառուցապատումը հանդիսանալով կարևոր տեսանելի կողմնորոշիչ համայնքի տրանսպորտային գլխավոր մուտքի հատվածում:

Նախագծվող թաղամասը բաղկացած է 13 շենքերից: Նախագծում առկա կառույցները բաժանված են 4 հիմնական մասնաշենքերից «A», «B», «C», «D» բնակելի մասնաշենքերից, «E» սպա կենտրոն:

**«A» ՄԱՍՆԱՇԵՆՔ**

Շենքի առանցքային չափերը կազմում են 49 x 18 մ: Հարկայնությունը նախատեսված է 1 ստորգետնյա հարկ և 9 վերգետնյա հարկ և տեխնիական հարկ վերելակի սպասարկման համար: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 32 մետր: Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկանգառ 32 մեքենայի համար: Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ: Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը և տարբեր հասարակական նշանակության սենքեր, որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից: 2-ից մինչև 9-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ, որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցի շուրջ:

**«B» ՄԱՍՆԱՇԵՆՔ**

Շենքի առանցքային չափերը կազմում են 32 x 24 մ: Հարկայնությունը նախատեսված է 1 ստորգետնյա հարկ և 9 վերգետնյա հարկ և տեխնիական հարկ վերելակի սպասարկման համար: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 32 մետր: Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկանգառ 23 մեքենայի համար: Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ: Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը և տարբեր հասարակական նշանակության սենքեր, որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից: 2-ից մինչև 9-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ, որոնք խմբավորված են 1 մուտքային հանգույցի շուրջ:

**«C» ՄԱՍՆԱՇԵՆՔ**

Շենքի առանցքային չափերը կազմում են 48 x 18 մ: Հարկայնությունը նախատեսված է 1 ստորգետնյա հարկ և 8 վերգետնյա հարկ և տեխնիական հարկ վերելակի սպասարկման համար: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 28 մետր: Շենքի ստորգետնյա

հարկերում նախատեսված է ավտոկանգառ 32 մեքենայի համար:Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ:Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը և տարբեր հասարակական նշանակության սենքեր, որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից: 2-ից մինչև 8-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ, որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցի շուրջ:

#### **«D» ՄԱՍՆԱՇԵՆՔ**

Շենքի առանցքային չափերը կազմում են 49 x 18 մ: Հարկայնությունը նախատեսված է 1 ստորգետնյա հարկ և 9 վերգետնյա հարկ և տեխնիկական հարկ վերելակի սպասարկման համար: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 32 մետր:Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկանգառ 32 մեքենայի համար:Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ:Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը և տարբեր հասարակական նշանակության սենքեր, որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից: 2-ից մինչև 9-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ, որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցի շուրջ:

#### **«E» ՄԱՍՆԱՇԵՆՔ**

Շենքի առանցքային չափերը կազմում են 49 x 18 մ: Հարկայնությունը նախատեսված է 1 ստորգետնյա հարկ և 9 վերգետնյա հարկ և տեխնիկական հարկ վերելակի սպասարկման համար: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 32 մետր:Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկանգառ 32 մեքենայի համար:Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ:Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը և տարբեր հասարակական նշանակության սենքեր, որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից: 2-ից մինչև 9-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ, որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցի շուրջ:

Համալիրի արտաքին հարդարման լուծումները պայմանավորված են շրջակա կառուցապատման պայմաններով և համալիրի ֆունկցիոնալ նշանակությամբ: Ճակատների հարդարանքի համար նախատեսված են բնական քար ֆելզիտ, ճակատային ապակեպատում: Վերջնական գունային լուծումները կտրվեն աշխատանքային փաստաթղթերի մշակման փուլում:

Ներքին հարդարանքը ընդունված է ելնելով ֆունկցիոնալ և շահագործման պահանջներից բարձրորակ նյութերի կիրառմամբ:

Հատակները ավտոկանգառում և տեխնիկական սենքերում նախատեսված են հղկված բետոնից և կերամոզրանիտից Խոհանոցներում և սպասարկման սենքերում նախատեսված է երեսապատում կերամիկական սալիկներից: Հիմնական հասարակական սենքերում՝ նախատեսված է բնական քարե սալիկներով երեսապատում, միջբնակարանային նախասրահների հատակները կերամիկական սալիկների երեսապատում:

Առաստաղները ավտոկանգառում և տեխնիկական սենքերում նախատեսված է ներկել ակրիլային ներկերով քսահարթված ե/բ սալերի վրայից: Խոհանոցներում և սպասարկման սենքերում նախատեսված է կախովի առաստաղներ խոնավակայուն գիպասսովարաթղթից ներկված ակրիլային ներկերով և Արմատրոնգ տիպի սալիկավոր, կախովի առաստաղներ:

Պատերը և միջնորմները հիմնականում նախատեսված են բետոնե բլոկերից: Միջբնակարանային բաժանարար պատերը նախատեսված են երկու շերտ բետոնե բլոկերից ձայնամեկուսիչ հանքային բամբակե միջնամասով:

Շենքը վերաբերվում է 1 աստիճանի հրակայունությանը և հրդեհային անվտանգության ՓՅ 1 դասին: Դռների հրակայունության դասը 1-ին տիպի հակահրդեհային պատերում ընդունված է EI 60: Ստորգետնյա ավտոհանգրվանը այլ նշանակության սենքերից անջատված է REI 150 հրակայունության սահմանով: Թեքամուտքը անջատված է ավտոկայանատեղիից հակահրդեհային EI 60 դասի հրակայունության դարպասներով:

Ե/Բ միջհարկային ծածկերը նախատեսված են REI 60 դասի հրակայունության:

Ստորգետնյա հարկում նախատեսված է Չ3 տիպի չծխացող աստիճանավանդակներ դեպի դուրս անմիջական ելքերով: Աստիճանավանդակի մուտքերը ավտոկայանատեղիից իրականացվում է անցախուց-նախամուտքերով, օդի դիմհարով: Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային EI 30 հրակայունության սահմանով:

Բոլոր վերգետնյա հարկերը ապահովված են եվակուացիոն ելքերով Չ1 տիպի չծխացող աստիճանավանդակների միջոցով: Վերելակների հորանները դռները նույնպես նախատեսված են EI 30 հրակայունության սահմանով:

Շենքը ունի հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորություն բոլոր ճակատներից:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Ստորգետնյա հարկում առկա է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղ, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց 1900 մարդու համար: Այս հարկում նախատեսված է նաև սանհանգույց պատասպարանից օգտվողների ինչպես նաև սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Ինչպես նաև նշված տարածքը ապահովված է օդափոխությամբ, կրակմարիչներով և վթարային լուսավորությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության: Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ:

Համաշինարարական աշխատանքները կատարել CHИП 3.03.01-87-ով:

Նախագիծը մշակված է համաձայն՝

- ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱԿԱՑՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
- ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ
- ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
- ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ
- ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

Կառուցապատման ենթակա հողատարածքի բուսահողի հզորությունը կազմում է մոտ 20-25 սմ, հանվող բուսահողի ծավալը կազմում է 700մ<sup>3</sup>: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հանված բուսահողը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

**ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 39291.25 մ.ք.
- Կառուցապատման մակերեսը՝ 15081,4 մ.ք. (38.4%)  
այդ թվում՝
  - Շինությունների մակերեսները - 10178,8 մ.ք. (25.9%)
  - Հարթակների և անցումների մակերեսները - 4902,6մ.ք. (12.5%)
- Ճանապարհներ ու սավաճքներ՝ 7999.8 մ.ք. (20.4%)
- Կանաչապատման մակերեսը՝ 16210.05 մ.ք. (41.3%)  
այդ թվում՝
  - Միզամարգեր, կանաչապատ տարածքներ և խաղահարապարակներ - 13936,05 մ.ք. (35.5%)
  - Խոտածածկ գեղցանացով և կանաչապատ հետիետնի ճանապարհ - 2274 մ.ք. (5.8%)
- Համալիրի ստորգետնյա կառուցապատման մակերեսը - 10633.8 մ.ք.
- Համալիրի շենքերի վերգետնյա կառուցապատման գումարային մակերեսը - 97377.88 մ.ք.
- Բնակարանների քանակը ընդհանուր համալիրում - 1164 բնակարան
- Ստորգետնյա ավտոկանգառների համալիրում - 394 մեքենա
- Բացօդյա ավտոկայանատեղի - 421 մեքենա

**2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱ**

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

**1.** Աշխատանքների բնույթից ելնելով, բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

**2.** Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված **[ընդհանրացված]** տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

**3.** Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**1.** Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ **[հատուկ արտահագուստ, կոշիկ]**, համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով **[ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն]**, սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

**2.** Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

**3.** Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

**4.** Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

**2.1 Շինարարության կազմակերպչատեխնոլոգիական սխեմա**

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 96 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում CAT 320 ( կամ նմանատիպերի ) կիրառումը:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է **QTZ 280** մակնիշի աշտարակային կրունկ: Շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երբ ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կրունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կրունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան,



պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բեռները շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Քանդման աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր

- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

## 2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **96 ամիս, 8 օրացուցային տարի**:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է **374 մարդ**: Բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը կազմում է **1,65**:

**2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները :

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ**

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	ZOOMLION WA6017-8 կամ նմանատիպերը	3
2	Ավտոմոբիլային կոունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոկոունկ	KC 55713-6 ГАЛИЧАНИН	2
4	Էքսկավատոր՝	CAT 325DL(01) , Volvo EC460 BLC(01 ) Hyundai ROBEX 300	2
5	Գլղոն	CAT CS 563	2
6	Բուլդոզեր	CAT D6R	2
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	8
8	Բեռոնամոխիչներ	777 DO 01 Mercedes Benz Axor, 777 TP01 Actros 4141, 001 PS 01 Astra HD	8
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ՄԵ-91A	8
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ՄԵ-102A	16
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ՄԵ-4	8
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ՄԶ-4709A	12

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

**2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները**

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

*Հողային աշխատանքներ՝*

- Հանույթ՝ 89200 մ<sup>3</sup>
- Հետլիցք՝ 13200 մ<sup>3</sup>
- Տեղափոխում՝ 76000մ<sup>3</sup>

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

**Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Բնակելի շենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 14 մարդ

**N**– ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 360 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 2496 օր

$$W_{\Sigma. in} = (14 \times 0.016 + 360 \times 0.025) \times 2496 = 23023.104 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 9.224 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 15000 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1920

**D** – ջրցանի քանակե օրեկան, 2 անգամ

$$U_1 = 15000 \times 0.0015 \times 1920 \times 2 = 86400 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 15.348 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 109423,104 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները,

վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները սպասարկվում են այն ընկերության կողմից, որը մատակարարել է բիոզուգարանները:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Տարածքի ջրցանի, կոմունալ-կենցաղային կարիքների, շինարարական տեխնիկայի անվտոգության լվացման ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ԲԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

**2.5 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը**

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր :

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների , շինվածքների , նյութերի և սարքավորումների ,

աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը ;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը ;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը :

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի

տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա :

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը ; շինարարական կոնստրուկցիաների , շինվածքների , իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին , անձնագրերի , սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը :

**2.6 Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության պահանջներ**

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ

հատկապես կապված կրունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:


Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:




Կոտայքի մարզ  
 Ծաղկաձոր քաղաք  
 Հատված կադաստրային քարտեզից  
 Կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0246  
 Մասշտաբ 1: 2000



	Կոորդինատներ	
	X	Y
1	8477936.6964	4488973.1444
2	8477936.1268	4488969.5171
3	8477970.5798	4488963.3028
4	8477967.9189	4488946.3773
5	8477963.9230	4488920.9606
6	8477968.2279	4488912.8014
7	8477968.4212	4488897.6309
8	8477990.0967	4488897.6309
9	8477989.9969	4488900.4497
10	8478092.3735	4488900.6897
11	8478134.1567	4488897.2077
12	8478161.2859	4488901.0925
13	8478215.4756	4488917.3645
14	8478214.6740	4488923.2950
15	8478209.8820	4488964.1134
16	8478254.4785	4488975.5208
17	8478272.6845	4488980.1777
18	8478271.9660	4488988.2510
19	8478194.3010	4488968.3850
20	8478191.0170	4488993.2500
21	8478212.5275	4488998.6871
22	8478269.7460	4489013.1530
23	8478197.7439	4489037.9321
24	8478196.9420	4489048.0371
25	8478170.2765	4489062.1100
26	8478128.9589	4489059.2833
27	8478126.9494	4489054.2792
28	8478013.1460	4489047.9895
29	8477955.1097	4489036.2947
30	8477943.4705	4489015.1240





**ՏՆՈՒՈՒԹՅՈՒՆ**


Սև գույն	Ջեմադրություն	Գրանիտային ծածկեր	Պարկինգ
Կապույտ գույն	Ջեմադրություն	Ստանդարտ շինարարական	Ստանդարտ շինարարական
Կանաչ գույն	Ջեմադրություն	Ստանդարտ շինարարական	Ստանդարտ շինարարական
Կարմիր գույն	Ջեմադրություն	Ստանդարտ շինարարական	Ստանդարտ շինարարական

Տեսակ	Մակերես (մ.ք.)	Պորցենտ
Գլխավոր ընդհանուր մակերեսը	39291.25 մ.ք.	
Կառուցապատման մակերեսը	15081.4 մ.ք.	(38.4%)
Ջիլոպոյունների մակերեսները	10178.8 մ.ք.	(25.9%)
Պարկինգի և անցուղիների մակերեսները	4902.6 մ.ք.	(12.5%)
Ճանապարհերի ու սպիլվեյթների մակերեսը	7999.8 մ.ք.	(20.4%)
Կանաչապատման մակերեսը	16210.05 մ.ք.	(41.3%)
Սիվաբարձեր, կանաչապատ տարածքներ և խաղահարավարարակներ	13936.05 մ.ք.	(35.5%)
Խոտածածկ զեղանակով և կանաչապատ հետիոտնի ճանապարհ	2274 մ.ք.	(5.8%)


**ՏԵՆԻՎԱՆՏԵՍԱԿԱՆ ՏՎՅՈՒՆԵՐ**

Ջամադրության ստորգետնյա կառուցապատման մակերեսը	10633.8 մ.ք.
Ջամադրության շենքերի վերգետնյա կառուցապատման գումարային մակերեսը	97377.88 մ.ք.
Քանաչապատման ընդհանուր համախառն	1164 մ.ք.
Ստորգետնյա ավտոկայանների համախառն	394 մեքենա
Քաղաքային ավտոկայանների	421 մեքենա


2.6.2 Իրադրային հասակագիծ



Մարզ Կոտայք, համայնք Ճաղկածոր Ճաղկածոր ք. Պահլավունյաց փողոց 73 հասցեի հատկացված հողամասի սահմանագծերից 70.0 մ հեռավորության վրա գտնվող անշարժ գույքերի իրավիճակային սխեմա




*Օբյեկտները համապատասխան չեն կատարվում*  
 Ջ. Կարաբյուրյան  
 12.07.  
 Մ. Կարաբյուրյան



Մասշտաբ 1:500		
Որակավորում ունեցող անձ	Երուսրդ Սանուկյան	
Որակավորման վկայականի համարը	0362	
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը	«ԿԱՆՈՆ ԱՐԵԱ» ՍՊԸ	
ՀՎԳԳ	02695356	
Ստորագրություն		
ամիս	յափագրության	24.06.2023թ.
ամսաթիվ	հատակագծի կազմման	03.07.2023թ.



2.6.4 Երևանի քաղաքի հատակագիծ



Լիցենզիայի մասին տեղեկություններ և հարցեր: Ընթացիկ և/կամ անցյալում Հայաստանի Հանրապետության կողմից ստացված լիցենզիայի մասին տեղեկությունները կարելի է ստուգել հետևյալ կայքի վրա: [www.mca.am](http://www.mca.am)

All materials in the project are copyrighted by HARPET Design LLC. Licensed only for the intended use. Any unauthorized use without the written consent of HARPET Design LLC is strictly prohibited. HARPET Design LLC is not responsible for any damages or losses caused by the use of the project. The user must verify the accuracy of the information provided and obtain all necessary permits and approvals from the relevant authorities. HARPET Design LLC is not liable for any errors or omissions in the project. The user must verify the accuracy of the information provided and obtain all necessary permits and approvals from the relevant authorities. HARPET Design LLC is not liable for any errors or omissions in the project.

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐ  
- Վազոն գրասենյակ  
- Փակ պահեստ  
- Աճեցի ընդունման կետ  
- Մանիտարահիգիենիկ Եշանախոյաք, հանդերձարան  
- Ժամանակավոր զուգարան  
- Ժամանակավոր լվացարան  
- Գոյություն ունեցող ցանկապատ  
- Ժամանակավոր դարպաս դռնակ  
- Աղբաման  
- Տեղեկատվական վահանակ  
- Էլ. վահանակ  
- Հակահրդեհային վահանակ  
- Հակահրդեհային հիդրանտ  
- Ժամանակավոր ջրագիծ  
- Ժամանակավոր ծորակ  
- Անվերջիկ լվացման կետ  
- Օդով անցնող ժամանակավոր սարկուս  
- Լուսարձակ  
- Տիտեղ արգելվում է  
- Մուտքն արգելվում է

ՄԱՐԿԱԿԱՆ  
- 0525  
- 0012  
- 0517  
- 0516  
- 0524

ՆԱԽԱՐԱԿԱՆ ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐ  
12 ՄԱՍՆԱԿԵՆԵՐԻ ԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆՈՒՄԻ ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՎՈՐԱՐՑԱՆ ԿՈՎՈՐՈՒՄ  
ՔՅ ԿՈՍՏԱԲԻ ՄԱՐԿԻ ԵՐԿՐԱԿՈՐ ԳՆԱՆՈՒՄԻ ԵՐԿՐԱԿՈՐ ԲՈՒՆԱԿՈՒՄԸ 73 ԳՈՐԱՄԱՍԻՄ

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
ԱՎԱՆՈՒՄԻ ԱՆՎՈՒՄԸ


ՓՈՒԿՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ՎԵՐՆԱՅՈՒՄ  
REVISION  
Table with 2 columns: No, DATE, and DESCRIPTION

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
EXECUTIVE OFFICER:  
ԱՂԻԿԱՆ

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
DESIGNER:  
ԱՂԻԿԱՆ

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
DRAWING NAME:  
ԵԳԳ ԳՆԱՆՈՒՄԻ ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
DRAWING NUMBER:  
05  
ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
DRAWING SCALE:  
ՕՍԿ ԳՆԱՐԿԻ  
ՎԱՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՆՆԵՐԻ ՎՈՐԱՐՑԱՆ  
DATE:  
2023














### 3. ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՄԱՍ

#### 3.1 *Էլ. մատակարարում*

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի սնուցումն նախատեսվում է իրականացնել, համաձայն <<ՀԵՅ>> ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանների /կցված Հավելվածներ բաժնում/:

Շենքերի էլեկտրամատակարարումը իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կառուցել երկու տրանսֆորմատարային ենթակայաններ, որոնց համար շենքերի նկուղային հարկերում նախատեսված են տարածքներ: Յուրաքանչյուր ենթակայանից նախատեսվում է սնուցել 6 մասնաշենքեր:

Բազմաբնակարանային մասնաշենքերից յուրաքանչյուրի -1 նկուղային հարկերում տրամադրված են շենքերի էլեկտրավահանակային սենյակներ: Մասնաշենքերը սնող մալուխները ենթակայաններից դուրս գալով, նկուղային հարկի առաստաղին ամրացվող մետաղական վաքերով մոնտաժվելով մոտենում են յուրաքանչյուր շենքի էլեկտրավահանային սենյակներ և մտնելով ներս միանում են մուտքային բաշխիչ սարքավորումներին:

Մասնաշենքերը սնող մալուխների ընտրությունը կատարվել է համաձայն հաշվարկի , ելնելով շենքերի սպառման համակարգի բեռի բնութագրից:

Շենքերում տեղադրված հաշիչների արկղերից, որոնք նախատեսվում են մոնտաժել նկուղային հարկերում, անցկացվում են մալուխներ դեպի յուրաքանչյուր բնակարանի վահանակ, դեպի հասարակական տարածքների վահանակներ և դեպի շենքի ընդհանուր սպառման վահանակներ:

Ընդհանուր սպառման վահանակներն են՝ մուտքերի և ավտոկայանի լուսավորության վահանակները, պոմպակայանի բաշխիչ վահանակը, վերելակների բաշխիչ վահանակները, օդափոխության և ծխահեռացման բաշխիչ վահանակները: Վահանակները ունեն հնգալար համակարգ (TN-C-S հողանցման համակարգ)

Նախագծում վերը նշված բաշխիչ վահանակներից նախատեսված է մայրուղային և խմբային մալուխային ցանցեր, որոնց անցկացման հատակագծերը կցվում են:

Հաշվիչների արկղերից դեպի վահանակներ և վահանակներից դուրս եկող մալուխային ցանցերը իրականացվում են պղնձե ջիղերով և չայրվող մեկուսացմամբ մալուխներով:

Լուսավորության և սարքավորումների սնման ցանցերը իրականացված են հնգալար և եռալար մալուխներով, որոնց ընտրությունը կատարվել է համաձայն ԷՄՆԸՊ ՏԿ III գլխի 8 կետի №6 և №7 աղյուսակների: Լուսավորության ցանցը սնող մալուխների նվազագույն կտրվածքը նախատեսվում է 3x1.5մմ<sup>2</sup>: Լուսավորության ցանցի մալուխները նախատեսվում է մոնտաժել, սվաղի տակ, տուփախողովակներով և առաստաղից կախվող մալուխատար վաքերով:

Շենքերի ներքին արհեստական լուսավորության համար նախագծով նախատեսվում է հասարակական արտադրական տարածքների համար կիրառվող

լուսատուներ: Շինության լուսավորության համար կիրառվում են փոքր հզորությամբ և բարձր աստիճանի լուսատվությամբ LED լուսատուներ (էներգախնայող A դասին համապատասխան): Լուսավորության ղեկավարումն ընդհանուր օգտագործման տարածքներում և աշխատանքային սենյերում իրականացվում է պատերին ամրացվող միաբևեռ և երկբևեռ անջատիչների միջոցով: Ընտրված են 16Ա հոսանքով 220Վ անջատիչներ

Նախագծով նախատեսված է նաև վթարային լուսավորության ցանցը:

Վթարային լուսավորությունը նախատեսվում է իրականացնել ներկառուցված մարտկոցով լուսատուների միջոցով: Վթարային լուսավորության մարտկոցային բլոկները, ապահովում են սնուցումը ոչ պակաս 1-3 ժամ՝ հիմնական սնման խափանման դեպքում:

Ուժային սարքավորումների էլեկտրամատակարարումն իրականացվում է համաձայն ներկայացված սարքավորումների հզորությունների: Ուժային սարքավորումների մալուխները նախատեսվում են մոնտաժել մետաղական վաքերով և տուփախողովակներով, իսկ կտուրում տեղադրված օդափոխության, ծխահեռացման և վորելակների մալուխները բարձրանում են նկուղային հարկից շենքում նախատեսված մալուխատար հորաններով:

### **Շենքերի հողանցումը և շանթապաշտպանությունը**

Հողանցման սարքվածքն բաղկացած է 40x4մ կտրվածքով շերտապողպատից (հորիզոնական հողակցիչ) եզրագծից, որն անց է կացվում շենքերի շուրջը, հիմքից առնվազն 1մ հեռավորության վրա, և ուղղահայաց 2.5մ երկարության հողանցման էլեկտրոդներից, որոնք հորատվում են 3 մ խորությամբ գրունտում և եռակցվում հորիզոնական հողանցման եզրագծին:

Հորիզոնական հողանցիչը անհրաժեշտ է տեղադրել 0.5մ խորությամբ: Հողակցիչի բոլոր միացումների տարրերը և նրանց հատումներն իրականացնել եզրածածկված եռակցումով:

Շենքի ներսում գտնվող էլ.վահանային սենյակում տեղադրված մուտքային բաշխիչ վահանի գլխավոր հողանցման գլխավոր դողը (ԴՅՄ) անհրաժեշտ է երկու տեղում միացնել շենքի արտաքին եզրագծին, որն իրականացվում է 40x4մ շերտապողպատով և անց է կացվում պատերով՝ ամրանալով հաղորդաձո- դակալների միջոցով: Հողանցման հաղորդչի անցումը պատերի միջով իրականացվում է պատերի մեջ տեղադրվող մետաղական խողովակների միջոցով:

Համաձայն ԷՄՆԸՊ ՏԿ VI գլխի 37.1 կետի, որպես գլխավոր հողանցման հաղորդադող (ԳՀՀ-ԴՅՄ) կիրառվում է մուտքի սարքավորման PE հաղորդադողը: Նախագծում շենքի բոլոր մետաղական հաղորդակցուղիներ պետք է միացվի ԳՀՀ-ին Նախատեսվում է պաշտպանիչ հաղորդադողի միացումը շենքի արտաքին հողանցման եզրագծին:

Շենքի հիմքում տեղադրվող մետաղական ամրանները միացնել հողանցման արտաքին եզրագծին:

Տարվա ցանկցած պահին հողանցման սարքվածքի դիմադրությունը պետք է չգերազանցի 30 Օհմ: Մոնտաժային աշխատանքները ավարտելուց հետո անհրաժեշտ է չափել հողանցման սարքվածքի դիմադրությունը, եթե այն չի բավարարում, անհրաժեշտ է եզրագծի երկայնքով ուղղահայաց էլեկտրոդներ ավելացնել:

Պաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից նախատեսվում է իրականացնել շենքի տանիքում շանթապաշտպանության համար նախատեսված եզրագիծը իջեցումներով հողանցման կոնտուրին միացման միջոցով: Կտուրում շանթապաշտպանության համար նախատեսված եզրագծին է միացվում նաև առանձին տեղակայված շանթարգելները: Շանթարգելները տեղակայված են կտուրի այն հատվածներում որտեղ նախատեսված են տեղադրել օդափոխության սարքերը:

Հողանցման և շանթապաշտպանության մոնտաժային հատակագիծը ներկայացված է գծագիր 22-ում:

Էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել ԷՏԿ-ի, ՀՀՇՆ 31-03.01-2014 - ի և գործող այլ հրահանգների նորմերի պահանջներով:

### 3.2 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Մարզ Կոտայք, հ. Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց 73 հասցեում նախատեսվող 12 մասնաշենքից բաղկացած բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի սառը ջրամատակարարման և կոյուղու մասը կատարված է նախագծի ճարտարապետական մասի, պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն՝

-ՀՀՇՆ II-8.04.02.-2005 «Շենքերի եվ շինությունների հրդեհային ավտոմատիկա»

-ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում եվ ջրահեռացում»

-ՀՀՇՆ21-01-2014 «Շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն»:

Նախագծով նախատեսված է հետևյալ համակարգերը.

1. խմելու տնտեսական ջրամատակարարում,
2. հակահրդեհային ջրամատակարարում,
3. տնտեսական կենցաղային կոյուղի,
4. մթնոլորտային կեղտաջրերի կոյուղի:

#### 1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում ( Ջ1 )

Համակարգը նախատեսված է բնակելի համալիրի խմելու-տնտեսական կարիքների համար:

Ջրի մուտքը ավտոկայանատեղի նախատեսվում է արտաքին ջրմուղի ցանցից՝ համաձայն տեխնիկական պայմանի: Ներքին ջրամատակարարման անխափան աշխատանքի համար ավտոկայանատեղիում՝ -4.50 նիշում նախատեսված են պոմպակայաններ, որոնցում տեղակայված են խմելու-տնտեսական կարիքների համար ինվերտորային պոմպային կայանքներ 3 պոմպերով (2-ը աշխ., 1-ը պահ.), որոնց

գումարային  $Q=2.7$ լ/վ,  $H=50$ մ: Ջրի կանգնակներն անցնում են միջանցքի հորանի միջով և ջերմամեկուսացվում: Կանգնակները նախատեսված են  $d=63-25$ մմ պոլիպրոպիլենե ( PPR ) խողովակներից: Բնակարանների ջրամատակարարումն իրականացվում է յուրաքանչյուր հարկի համար առանձին բաշխիչ սանրիկով, որից դուրս եկող ջրի գծերի վրա տեղադրվում է ջրաչափ և ֆիլտր: Բնակարանների մուտքագծերը՝  $d=25$ մմ ( PPR ), անց են կացվում հատակի բետոնի ծածկույթի միջով և ջերմամեկուսացվում: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա:

## 2. Հակահրդեհային ջրամատակարարում ( Ջ2 )

Համակարգը նախատեսված է բնակելի համալիրի համար, որը բաղկացած է 1 հարկ ավտոկայանատեղիից, 1 հասարակական նշանակության հարկից և 7-8 բնակելի հարկերից:

Ավտոկայանատեղիում նախատեսված է ջրով գործարկվող ավտոմատ սպրինկլերային համակարգ:

Սպրինկլերային հրդեհամարման համակարգը շենքի մյուս համակարգերից առանձին՝ անկախ գործող համակարգ է, որի համար անհրաժեշտ ջրի հաշվային ծախսը որոշված է սպրինկլերների միաժամանակ աշխատելու պայմանից:

Սպրինկլերային ցանցի հաշվային ծախսը կազմում է՝

$$Q_{սպ}=0.12 \times 240 = 28.8 \text{լ/րկ:}$$

Համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ ջրի ընդհանուր քանակությունը որոշված է սպրինկլերների 60 բոպե աշխատելու պայմանից: Հակահրդեհային պաշարապահ ծավալը կստացվի՝

$$W = 28.8 \times 3600 / 1000 = 103.68 \text{մա:}$$

Պոմպակայանը և ռեզերվուարը տեղակայված են N1 մասնաշենքի ավտոկայանատեղիին կից հատվածում՝ -4.50 նիշում: Պոմպակայանում նախատեսված է սպրինկլերային հակահրդեհային պոմպային կայանք 3 պոմպերով (1-ը աշխ., 1-ը պահ., 1-ը ջոկեյ)  $Q=28.8$ լ/վ,  $H=30$ մ:

-4.50 նիշում, յուրաքանչյուր մասնաշենքի համար, ջրամատակարարման պոմպակայաններին կից, նախատեսված են հրշեջ ծորակների համար հակահրդեհային ջրամատակարարման պոմպակայաններ, որոնցում տեղակայված են հակահրդեհային պոմպային կայանքներ 2 պոմպերով (1-ը աշխ., 1-ը պահ.)  $Q=5.0$ լ/վ,  $H=47$ մ և պահուստային կուտակիչ բաքեր: Պոմպակայանը սնվում է արտաքին ջրագծից և պահուստային ջրի կուտակիչ է/բ կամ մետաղական բաքից: Բաքը նախատեսված է հակահրդեհային կարիքների համար՝  $W=18.0$ մա ծավալով, 60բոպե ջրի պաշարով:

Հակահրդեհային ելքը բնակելի և հասարակական մասերի, ինչպես նաև ավտոկայանատեղիի համար կազմում է  $2 \times 2.5$ լ/վրկկ:

Բոլոր հարկերում նախատեսված են հակահրդեհային պահարաններ, որոնք կահավորված են  $dy=50$ մմ հրշեջ ծորակներով,  $L=20$ մ փողրակներով,  $d=16$ մմ ծայրափողով և երկու հատ փրփուրե կրակմարիչներով: Այն հրշեջ ծորակների համար, որոնց մոտ ճնշումը գերազանցում է 4.0մթն., նախատեսվում է տեղադրել մետաղյա տափօղակներ (ավտոկայանատեղիում և հասարակական հատվածում):

Հակահրդեհային ներքին ցանցը օղակաձև է, քանի որ այդ ցանցին միացած հրշեջ ծորակների քանակը գերազանցում է 12-ը:

Հակահրդեհային ջրմուղի ներքին ցանցը մոնտաժվում է, նկուղային հարկում առաստաղի տակով, իսկ կանգնակները՝ միջանցքով անցնող հորանների միջով:

Ցանցը նախատեսված է իրականացնել պողպատե էլեռակցվող  $d=57-76$ մմ խողովակներով:

Համակարգը մոնտաժումից հետո ենթարկվում է հիդրավլիկական փորձարկման և ներկվում հակակոռոզիոն ներկով:

### 3. Տնտ-կենցաղային կոյուղի ( Կ1 )

Համակարգը նախատեսված է բնակարանների սանիտարատեխնիկական սարքերից տնտ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Շենքերից կեղտաջրերի հեռացումը կատարվում է սանիտարական սարքերից ներքին ցանցի միջոցով դեպի բակային ցանց: Կոյուղու խողովակներն անց են կացվում հորանների միջով, իսկ օդափողության կանգնակները բարձրանում են տանիքից առնվազն 0,7մ: Կանգնակների վրա, հատակից 1,1մ բարձրության վրա տեղադրվում են ստուգիչ սարքեր, որոնց համար անհրաժեշտ են ռեվիզիոն դռնակներ: Ընդունվել են կոյուղու պոլիվինիլքլորիդե  $dy=160-50$  մմ խողովակներ:

### 4. Մթնոլորտային կեղտաջրերի կոյուղի (Կ2)

Համակարգը նախատեսված է շենքերի տանիքից և պատշգամբներից, ձնհալքի և անձրևաջրերի հեռացման համար: Ջրերի հեռացումը կատարվում է հոսակներից ներքին ջրահեռացման ցանցի միջոցով դեպի բակային ցանց, որտեղից միացվում է հեղեղատային կոյուղու բակային համակարգին: Ընդունվել են պոլիվինիլքլորիդե  $dy=110-50$ մմ խողովակներ:

#### 3.2.1 Օդափողություն

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի պահանջվող սանիտարահիգիենիկ պայմանները ապահովելու համար նախագծով նախատեսված է

օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգ: Օդափոխության մեխանիկական համակարգը կիրառվել է ավտոկայանատեղիներում և բազմաբնակարան շենքի խոհանոցներում, ինչպես նաև սանհանգույցներում: Միջանցքներում և բնակարաններում նախատեսված է բնական օդափոխության համակարգ:

Ըստ սանիտարահիգիենիկ նորմերի սանհանգույցներից նախատեսված է 75-100մ<sup>3</sup>/ժ օդի տարածում, գազօջախի օդաքարշ պահարանից 300մ<sup>3</sup>/ժ, ավտոկայանատեղիից ըստ ծավալի բազմապատիկի, որը կազմում է 2-ա պատիկ:

Ավտոկայանատեղերում վատորակ օդի տարածումը իրականացվում է ավտոկայանատեղիի յուրաքանչյուր հարկի ներքևի և վերևի գոտիներից: Արտաձման համակարգերը համակցված է ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Համակարգի էներգախնայողության նկատառումներից ելնելով ցանկալի է, որ համակարգը միացված լինի ծխի տվիչներին և աշխատի միայն ԹՄՊ գերազանցման ժամանակ:

Հասարակական տարածքների հետագա օգտագործման նպատակը հայտնի չլինելու պատճառով՝ հասարակական հարկից դեպի տանիք են բարձրացվում ՕԴ1 - ՕԴ12 հորանները, հետագայում օդափոխության խնդիրը ըստ տարածքի նշանա-կության լուծելու համար:

Բնակարաններում վատորակ օդի տարածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից, իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով:

Սանհանգույցներում նապատեսված են առանցքային օդամղիչներ, իսկ խոհանոցներում բնակչի կողմից գազօջախի վրա տեղակայվող քարշիչ պահարան:

Աղմուկի իլեցման համար նախատեսված են

- օդամղիչների հետ համակարգի միացումը կատարել ճկուն ներդիրների միջոցով:

- օդի արագությունը օդատարներում չի գերազանցում 5մ/վ:

Օդափոխության համարկարգերի օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց պատի հաստությունը, կախված կտրվածքից, ընտրված է ՀՀՇՆ IV-12.02.01-04:



## ՀԱԿԱԾԽԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծխի հեռացումը նախատեսված է արհեստական դրդմամբ, արտաձիգ հորանների միջոցով:

Ավտոկայանատեղերի սանդղավանդակների տամբուրներում և վերելակների հորաններում նախատեսված է օդի դիմհար:

Հրդեհի առաջացման պահին՝ ազդարարման համակարգի դրդմամբ, ավտոմատ կերպով անջատվում է արտաձող ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգը և միանում է հակաձխային համակարգը, բացվում են հրդեհվող հարկի տվյալ գոտու ձխային կափույրները և այրման արգասիքները համակարգերի օդամուղների միջոցով արտանետվում են մթնոլորտ: Միաժամանակ դիմհարների համակարգերի միջոցով իրականացվում է օդի ներածում վերելակների հորաններ, տամբուրներ:

Բոլոր հարկերում, ծխահեռացման հորանների վրա, որը անցնում է ընդհանուր միջանցքով, տեղադրվում է հակահրդեհային փական: Նորմալ ժամանակ փականների դիրքը փակ է:

## ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետագայում, հնարավոր է օդորակման և օդափոխության սարքերի տեղադրում, ըստ բնակիչների առաջարկվող լուծումների, որոնց արտաքին սարքերի տեղաբաշխումը ըստ նախնական վարկածի հնարավոր է բաց պատշգամբներում, սակայն այս հարցը պետք է քննարկվի և համաձայնեցվի պատասխանատու անձանց հետ:

Ջեռուցման համակարգի ևս թողնվում է ըստ բնակչի լուծումների, սակայն նրանք կաթսաների տեղակայումը ըստ ճարտարապետական գծագրերի նախատեսված է յուրաքանչյուր հարկում բնակարանների խոհանոցներում, որտեղ որ նախատեսված է կաթսայի այրման արգասիքների հեռացման ծխատարը և այրման համար անհրաժեշտ օդաման հորանը: Բնակարաններում նախատեսված է նաև օդանցք գազամատակարարման նորմատիվային պահանջը ապահովելու նպատակով: Ջեռուցման համակարգերը լինելու են անհատական ըստ բնակարանների և որպես ջեռուցիչ սարք նախատեսվելու է բնակչի նախընտրած սարքը: Բոլոր կաթսանների

համար ըստ տեղադրման վայրի՝ ծխատարներից, նախատեսվում է կոնդենսատորահավաք համակարգ, որը նախատեսված է ՋԿ բաժնում, որոնք էլ թթվայնության չեզոքարարով անցնելուց հետո միանալու են անձրևատար համակարգին:

Ներքին գազամատակարարման և ջեռուցման համակարգերը կնախատեսվեն հետագայում համապատասխան ՀՀ գործող նորմերի և կանոնների:

### 3.2.2 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատման մակերես 40% և ավելի է ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Էլեմենտների ընտրությունը կկատարվի հաշվի առնելով համալիրի նախագծի առանձնահատկությունները և տարածաշրջանի բուսականությունը, մասնավորապես՝

- թխկի կարմիր-80 հատ
- կատալպա – 64 հատ
- ձիակասկ-20 հատ
- գնդաձեղ ակացիա-116 հատ
- հուդայածառ- 30 հատ
- բարբարիս – 44 հատ
- գնդաձեղ իլենի-130 հատ
- սյունաձեղ թույա-90 հատ
- սիզամարգ-5100մ<sup>2</sup>
- գնդաձեղ սամշիտ-52 հատ
- փովոդ գիհի-30 հատ
- սամշիտ-1000մ

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել ինսամփի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կաթիլային ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով մասնագիտացված ընկերության կողմից:

**3.2.3 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ**

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 16210.05, \text{ մ}^2,$

K – ոռոգման օրական հաճախականությունն է,  $K = 2$


t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 16210.05) \times 2 \times 175 = \underline{\underline{34041,105}} \text{ մ}^3/\text{տարի}$$

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Ընդհանուր տվյալներ տարածքի մասին

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում: Լեռնագրաֆիկական տեսակետից շրջանը և տարածքը տեղադրված են Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավարևելյան լեռնաբազուկների վրա, դրանց ստորոտային մասում:



Ուսումնասիրվող տեղանքի կոսմոֆոտո

**Գեոմորֆոլոգիական** տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան եզրամասում, որն արևելյան մասից սահմանափակված է Գեղամա լեռների հյուսիս-արևմտյան եզրամասով, և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը ծովի մակարդակից միջինը տատանվում են 1725.4-1733.7 մետրերի սահմաններում:

**Երկրաբանական** կառուցվածքում ուսումնասիրվող տարածքի կտրվածքներում մասնակցում են չորրորդական (alQ4) ժամանակաշրջանի այլուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ ապարները կավային-ավազային և ճալաքարագետաքարային նստվածքներով: Մեր ուսումնասիրվող հարթակում առկա են խճաքարային, մանր գետաքարային և կավային գրունտները:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, քարաթափությունը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում՝ բացակայում են: Տեղանքում ստորերկրյա ջրերը

կապված են հարակից լանջերից եկող ջրերի և տարածքում գետի հունի ջրերի ջրհավաքման հետ: Տվյալ տարածքը բնութագրվում է ջրառատ լինելու հանգամանքով, որտեղ մակերևույթում գարուն ամառ սեզոնին առաջանում է ճահճացում (ժամանակավոր ջրակուտակումներ), որի պատճառով հողի մակերեսին տեղի է ունենում երոզիոն երևույթներ (բնահողի մակերեսին ճաքերի առաջացումներ):

#### 4.1.1 Ջրային ցանցը:

Լանդշաֆտա-ջրաբանական տեսակետից շրջանը և տարածքը մտնում են Ախուրյան-Հրազդան շրջանի մեջ, նրա հյուսիս-արևելյան եզրամասում, շրջանի հիմնական ջրային երակն է հանդիսանում Բջնի գետը՝ իր բազմաթիվ աջակողմյան և ձախակողմյան վտակներով: Հիդրոեկրաբանական տեսակետից տեղամասում առկա են բերվածքային առաջացումների համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, ինչպես նաև վերողողահունային դարավանդի գրունտային ջրերը:

#### 4.1.2 Կլիմա

Ծաղկաձորը գտնվում է բարձրադիր լեռնային գոտում, այդ իսկ պատճառով ջերմաստիճանը ամռանը այստեղ չի գերազանցում +26 աստիճանը, իսկ ձմռանը +5: Ձմռանը կլիման նույնպես մեղմ է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 789մմ է, որից 506 մմ՝ տարվա տաք սեզոնում (ապրիլ-հոկտեմբեր):

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Ձմռանը սովորական ջերմաստիճանը լինում է օրվա ընթացքում +5, գիշերը մինչև -20: Եղանակը փոխվում է անկանխատեսելիորեն: Սովորաբար Ծաղկաձորում դիտվում է արևային եղանակ: Արևային օրերի քանակը տարեկան կազմում է 230-260 օր: Սակայն ձմռանը հաճախակի դիտվում են տեղումներ ձյան տեսքով: Ընդ որում, սովորաբար մինչև 0.5-1մ միանգամից և այնուհետև նորից լինում է արևային օր: Սովորաբար արևոտ օրերի 70%-ը քամի չի լինում, իսկ 30% դիտվում է քամի: Տարածքում գերակշռում են արևմտյան քամիները: Քամու միջին արագությունը հիմնականում տատանվում է 0.1-3.0մ/վրկ սահմաններում:

Շրջանի օդերևութաբանական պարամետրերը ըստ «Հրազդանի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	1765	-8,0	-6,4	-2,0	5,0	10,1	13,8	17,2	17,2	13,5	7,5	1,3	-5,0	5,4	-32	35

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Հրազդան	81	78	74	70	69	69	67	64	64	69	76	79	72	69	46	

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ամսական Տեղումների քանակը _____, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310
	40	47	44	52	52	42	47	42	49	64	45	34	64			

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												20	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	823,2	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	2,1	18	19	22	24
			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
		ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,0							
		հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
		հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1,7					
			2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

Աղյուսակ 6. Արեգակնային ճառագայթումը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ <sup>2</sup>												Տարեկան գումարային
	ըստ ամիսների												
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևան	<b>356</b>	<b>453</b>	<b>700</b>	<b>818</b>	<b>987</b>	<b>978</b>	<b>995</b>	<b>917</b>	<b>695</b>	<b>547</b>	<b>375</b>	<b>311</b>	<b>8133</b>

Աղյուսակ 7. Անարև օրերի քանակը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Հրազդան	<b>5</b>	<b>5</b>	<b>4</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>0,3</b>	<b>0,06</b>	<b>0,2</b>	<b>0,3</b>	<b>1</b>	<b>4</b>	<b>7</b>	<b>30</b>



### 4.1.3 Մեյամա-տեկտոնական բնութագիրը:

Մեյամա-տեկտոնական տեսակետից շրջանը և տեղամասը գտնվում են Ծաղկունյաց հորստ-անտիկլինալի և Հրազդան-Մարմարիկ իջվածքի սահմաններում, որոնք բարդեցված են ծայրավորումներով և խզումներով: Այդ խզումներից մեկն անցնում է Ծաղկաձոր գետի հունով: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյամասկտիվ մարզերից մեկը:

### 4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում և ներկայիս լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ գետաքարակոպճային, ավազային գրունտները պինդ ավազակավային առանձին նրբաշերտերում պլաստիկ կավավազային լցանյութով, ավազային գրունտները կոպիճներով, կավային գրունտները, հազվադեպ խճաբեկորային գրունտները:

Տեղամասի ինժեներաերկրաբանական կտրվածքում առանձնացվել են 8 հիմնական գրունտների շերտեր կամ ինժեներաերկրաբանական տարրերը վերնից–ներքև.

Գրունտների նկարագրությունները

ԻԵՏ-Շերտ-1

Հողաբուսական շերտ (ավազակավ, խճավազի, ավազի պարունակությամբ): Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 0,2-4,2 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 II (96) կարգ է:

ԻԵՏ-Շերտ-2 (alQ4)

Գետաքարակոպճային, ավազային գրունտ պինդ ավազակավային լցանյութով: Շերտի անցած առավելագույն հզորությունը փորված հորատանցքերով 29,8 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 III (6b) կարգ է:

ԻԵՏ-Շերտ-3 (alQ4)

Ավազակավ շագանակագույն կիսապինդ, ծանր ավազային մասնիկների պարունակությամբ: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 0,6-8,0 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 II (33b) կարգ է:

ԻԵՏ-Շերտ-4 (alQ4)

Կավ շագանակագույն կիսապինդից մինչև պինդ թանձրության, որոշ հատվածներում ավազի, կոպիճի մինչև 10% պարունակությամբ: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 1,0-16,5 մետր է, Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 III (8b) կարգ է:

ԻԵՏ-Շերտ-5 (alQ4)

Ավազային գրունտ կոպիճով պինդ թանձրության ավազակավային, կավային լցանյութով: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 1,2-15,0 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 II (276)կարգ է:

ԻԵՏ-Շերտ-6 (ալQ4)

Խճաբեկորային գրունտ ավազային լցիչով: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 2,0-12,5 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 VI (86)կարգ է:

ԻԵՏ-Շերտ-7 (ալQ4)

Փոշենման ավազային գրունտ կոպիճի, խճավազի պարունակությամբ: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 1,2-6,2 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 II (276)կարգ է:

ԻԵՏ-Շերտ-8 (ալQ4)

Ավազային գրունտ կոպիճով, խճավազով փափուկ պլաստիկ ավազակավային լցանյութով: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 1,5-10,5 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի ժողովածու 1, աղ.1 II (276)կարգ է:

### 4.3 Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը ջրառատ է: Մեր հետազննվող տեղամասում գրունտային ջրերը բացահայտվել են 1,3-6,5 մետր խորության սահմաններում իսկ կանգնման մակարդակները տատանվում են մետր 0,8-3,9 մետր խորությունների վրա: Հարկ է նշել որ Հա-18, Հա-19 տեղամասերում մնացած տեղամասերի համեմատ նկատվել է ստորգետնյա ջրերի համեմատաբար ավելի բարձր ճնշում դեպի մակերևույթ: Դրա ապացույցն է նախկինում «Գեոգոն ՍՊԸ ընկերության կողմից Հա-19-ի մատուցներում փորված հորատանցքը (նախկին հետազննության արխիվ՝ Հա-2) որտեղից ստորգետնյա ջրերը դեպի մակերևույթ են դուրս եկել ինքնահոս ձևով:

### 4.4 Կենսաբազմազանություն

Քաղաքին հարակից են Հրազդանի անտառտնտեսության Ծաղկածորի անտառպետության անտառային էկոհամակարգերը՝ չափավոր չորային կաղնուտաբոխուտային լայնատերև խառը անտառներով ու հետանտառային նոսրանտառներով, որտեղ գերակշռող ծառատեսակը Կաղնի խոշորատեղն է (*Quercus macranthera*): Քաղաքի շրջակա անտառներում աճում են նաև բոխի, հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մաարենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենու (*Pyrus sp., P. georgica, P. communis*) և խնձորենու (*Malus silvestres*) զգալի գերակշռությամբ անտառային որոշ հատվածներ:

Բուն քաղաքն իրենից ներկայացնում է հետանտառային տափաստանացված լանդշաֆտ, որի անմշակ տարածքները ներկայացնում են տարախոտահացազգային, նեղատերև փետրախոտով, ցորնուկներով, թիթեռնածաղկավորների տարախոտով, հացազգիներով և բոշխերով պատված բուսական համակեցություններով:

#### 4.4.1 Բուսական աշխարհ

Ծաղկաձոր քաղաքի բուսականությունը իրենից ներկայացնում է հացազգիների գերակշռությամբ լեռնատափաստանային տարախոտեր /Ոգնախոտ Վորոնովի (*Dactylis Woronovii*), Սեզ տափաստանային (*Phleum phleoides*), Դաշտավուկ սոխուկավոր (*Poa bulbosa*) Կելերիա սանրաձև (*Koeleris cristata*) Յորնուկ ցցամազ (*Bromus squarrosus*), Շյուդախոտ ակոսավոր (*Festuca sulcata*) և այլն/, մասամբ մերձալպյան բարձրախոտերի /իշառվույտ նեապոլիտական (*Melilotus neapolitanus*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն/ մասնակցությամբ: Հողաբուսաշերտի հաստությունը 20-30 սմ է: Նշված տափաստանացված տարածքում առանձնանում են սոճու (*Pinus hamata*), վայրի տանձենու (*Pyrus communis*) և խնձորենու (*Malus silvestres*), կաղնու (*Quercus macranthera*) տարբեր հասակի ծառեր և, տեղ-տեղ նաև մասրենու (*Rosa*) ու ալոճենու (*Crataegus*) թփեր:

Բույսերի վեգետացիան սկսում է մայիսի սկզբներին: Այստեղ միամյա բույսեր շատ քիչ են հանդիպում, հիմնականում բազմամյա բույսեր են և առանձնանում են շատ արագ վեգետացիոն ժամանակահատվածով՝ հասցնելով ծաղկել ու պտուղ տալ շատ կարճ ժամկետներում: Մայիսի առաջին տասնօրյակին, տերևների և ցողունների կանաչ ֆոնի վրա առանձնանում են Պապլոր հայկականը (*Muscari armeniacum*) և Գնարբուկ գարնանայինը (*Primula veris*): Սոխուկավոր բույսերից հետո այս գոտին պատվում է *Ranunculus-Շ*, *Myosotis-Շ*, *Veronica-Շ* ծաղիկների խայտաբղետ գույներով:

Ամռան կեսին ծաղկում են դաշտավուկները, բոշխերը, ինչպես նաև *Gentiana*, *Campanula*, *Carum*, *Taraxacum* և այլ թիթեռնածաղկավորներ, բարդածաղկավորներ և խաչածաղկավորներ:

Ծաղկաձոր քաղաքի բնակավայրի տարածքում տեղ-տեղ աչքի են ընկնում խիստ նոսր դասավորվածությամբ միայնակ, կամ խմբերով, կամ մացառուտների վերածված խոշորառեջ կաղնու (*Quercus macranthera*) ծառերը, որոնք մեծամասամբ հատված են և բնաշվային աճի շնորհիվ վերականգնված: Առկա են նաև կորաբուն կեչի Լիտվինովի (*Betula litvinovii*) վեցաբուն մեկ ծառ և տեղ-տեղ աճող մասրենու (*Rosa canina*) ու սովորական կամ մահացու դափնյակի (*Daphne mezereum*) թփեր:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից: ՀՀ Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոնք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Տարածքին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակում:

Հ/հ	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Opopanax persicus</i>	Ճավշիր պարսկական	CR
2	<i>Sedum stoloniferum</i> Gmel.	Թանթանիկ ընձյուղակիր	VU
3	<i>Ophioglossum vulgatum</i> L.	Իժալեզու սովորական	CR
4	<i>Najas minor</i> L.	Ջրահարս փոքր	VU
5	<i>Puccinellia grossheimiana</i>	Անողնուցուկ Գրոսհեյմի	EN
<b>FUNGI – ՄԼԿԵՐ</b>			
1	<i>Amanita muscaria</i> (L.) Pers	Ճանճասպան կարմիր	VU
2	<i>Boletus edulis</i> Bull	Սպիտակ սունկ, թնջուկ	VU
3	<i>Mutinus caninus</i>	Մուտինուս շնային	EN
4	<i>Ithyphallus ravenelii</i>	Մուտինուս Ռավենելի	DD
5	<i>Ithyphallus impudicus</i>	Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ	EN
6	<i>Strobilomyces floccopus</i>	Կոնասունկ փաթիլատոսիկ	VU

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

#### 4.4.2 Կենդանական աշխարհ

Ծաղկաձոր համայնքի և դրա շրջակայքի համար դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները էական ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա: Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մինչև 1700 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն), կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի

պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1–անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2–անհետացող, կրճատվող):

Հ/հ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Հատիներեն	Հայերեն	ՀՀ	ՀՍՀՄ	ԲՊՄՄ
1	Vormela peregusna	Հարավոուսական խայտաքիս	2	2	-
2	Circaetusgo llicus Gmeelin	Եվրոպական օձակեր	1	1	-
3	Lusciniasvecica occidentalis	Իրանական կապտափող	2	-	-
4	Lacerta oarva Boulenger	Փոքրասիական մողես	1	1	-
5	RhinolophusMehelyi	Մեհելիի պայտաքիթ	1	1	-
6	Barbastella leuuucomelas Gretzschmer	Ասիական լայնականջ չղջիկ	2	-	-
7	Capra aegagrus erxleben	Բեզուարյան այծ	2	2	-
8	Mabuya auuurata Linneaus	Ոսկեգույն մարուս	1	1	-
9	Elapha hohenakeri strauch	Անդրկովկասյան սահնօձ	1	1	-
10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատվաօձ	1	1	-

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

**4.4.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները**

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և

աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորվելու է շինհրապարակի ներսում, առանձնացված տարածքում
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 4650 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

**4.4.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ**

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության և


հեռու լինելու պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

#### 4.5 Օդային ավազան


Համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ<sup>3</sup>, վերցված են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջից :

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 14 դիտակետ և 1 դիտակայան: 2022 թվականին Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Նախորդ տարվա համեմատությամբ 23%-ով աճել է փոշու, 19%-ով՝ ազոտի երկօքսիդի, 3%-ով՝ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները:




Գծապատկեր 43. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Գծապատկեր 44. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.






Գծապատկեր 45. Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Գծապատկեր 46. Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2022 / ԾԱՂԿԱԶՈՐ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2022 / ԾԱՂԿԱԶՈՐ



Համայնքի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը և ջեռուցման համակարգերը:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

**4.6 Ջրային ռեսուրսներ**

Համայնքի սահմանում գեղատեսիլ կիրճով հոսում է լեռնային Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետակը, որը գետաբերանի մոտ առաջացնում է լայնատարած գետահովիտ և թափվում Մարմարիկ գետը:

Ստորև ներկայացվում է Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի որակի մոնիթորինգի տվյալները, ըստ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված 2022թ. տեղեկագրի :

<i>Ջրային օբյեկտ</i>	<i>Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Ծաղկաձոր (Տանձաղբյուր)</i>	<i>Ծաղկաձոր քաղաքից վերև (311)</i>	<i>Վանադիում, երկաթ, բարիում, ալյումին</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
		<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
	<i>Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)</i>	<i>ԹԿՊ5, ԹՔՊ, նիտրիտ իոն, կոբալտ, երկաթ, քլորիդ իոն, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
		<i>Ֆոսֆատ իոն, վանադիում, բարիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>		

Տեղանքը շոայլորեն հարուստ է քաղցրահամ ջրերի բազմաքանակ էլքերով, որոնց թիվն անցնում է 20-ից:

Տարածքը հարուստ է ստորգետնյա ջրերով: Տարածքի գնահատականը տրված է “Рекомендации по охране окружающей среды в районной планировке” ձեռնարկի հիման վրա: Ստորգետնյա ջրերը կապված են նեոգեն-չորրորդականի հասակի չստորաբաժանված համախմբերի առաջացումների՝ հրաբխային լավաների հետ, պատկանում են ճեղքային, լավատակի և միջլավային տարատեսակներին:

**4.7 Թափոնների կառավարում**

Ծաղկաձորի համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	1400 մ <sup>3</sup>
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	76000 մ <sup>3</sup>
3.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	1.2 տ

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կօգտագործվի հետլիծքի և տարածքի բարեկարգման համար:

Շինհրապարակում շինաղբի կուտակումների կիրականացվեն հատուկ նախատեսված վայրում, անջրթափանց հարտակով և ծածկի տակ: Շինարարական աղբը բարձվելու է ինքնաթափերի վրա և ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հանգստի տնակների շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**4.8 Բնության հուշարձաններ**

ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկը ներկայացվել է համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմանն:

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	, Անանունի խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից <b>3.5</b> կմ դեպի հարավ
3	, Թագավորանիստի խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից <b>3</b> կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4	, Պեռլիտե փիղի քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից <b>2</b> կմ հվ, քարահանքի մոտ
5	, Անանունի բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6	, Ծակ քարի բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7	, Բազալտե երգեհոնի սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ <b>1.0</b> կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8	, Անանունի քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ <b>1.0</b> կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9	, Անանունի լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
10	, Անանունի լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ <b>1.0</b> կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11	, Անանունի խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ <b>3.0</b> կմ հս-արլ
12	, Հատիսի հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից <b>2.0</b> կմ արմ
13	, Ավազանի հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից <b>1.5</b> կմ հս-արլ
14	, Կարենիսի հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից <b>0.5</b> կմ հս-արլ
15	, Անանունի ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16	, Անանունի օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ <b>1.5</b> կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17	, Անանունի քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում

<b>18</b>	, Գուրթանասար <b>ն</b> հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից <b>3</b> կմ հվ
<b>19</b>	, Լեռնահովիտ <b>ն</b> քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից <b>4-5</b> կմ հվ-արլ, , Թեզխարաբ <b>ն</b> գյուղատեղիի մոտ
<b>20</b>	Ձորաղբյուրի <b>【Մանգյուսի】</b> բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր
<b>21</b>	, Հաղպրտանք <b>ն</b> աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր <b>【Աթարբեկյան】</b> թաղամասի արլ ծայրամասում, <b>1.5</b> կմ հս-արմ, ծ.մ-ից <b>1755</b> մ բարձրության վրա
<b>22</b>	, Համով <b>ն</b> աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից <b>1450</b> մ բարձրության վրա
<b>23</b>	, Քաղցր <b>ն</b> աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից <b>150</b> մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից <b>1300</b> մ բարձրության վրա
<b>24</b>	, Ձորի <b>ն</b> աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից <b>0.3</b> կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից <b>1580</b> մ բարձրության վրա
<b>25</b>	, Ավազան <b>ն</b> աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից <b>0.3</b> կմ հս-արլ, ծ.մ-ից <b>1450</b> մ բարձրության վրա
<b>26</b>	, Սագերի <b>ն</b> լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ <b>4</b> կմ հս
<b>27</b>	, Վիշապան <b>ն</b> լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ <b>4</b> կմ արլ
<b>28</b>	, Բազմալիճք <b>ն</b> լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ <b>3</b> կմ հս
<b>29</b>	, Լուսնալիճ <b>ն</b> լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ <b>7</b> կմ հս-արլ
<b>30</b>	, Ողջաբերդ <b>ն</b> բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
<b>31</b>	, Ռեիկտային կրկես Քյորոլի լեռան մոտ <b>ն</b>	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
<b>32</b>	, Ալպյան գորգ <b>ն</b>	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում <b>【Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300</b> մ բարձրության վրա <b>】</b>
<b>33</b>	, Թանթրվենի, Տիգրանի <b>ն</b>	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից <b>1350</b> մ բարձրության վրա

Ինչպես երևում է ներկայացված ցանկից, նախատեսվող գործունեությունը գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա ներկայացված բնության հուշարձաններից և որևէ ազդեցություն չի կարող տեղի ունենալ այդ ուշարձանների վրա:

**4.9 Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի մոտակայքում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների մասին տեղեկատվությունը նշված է համաձայն “ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին” 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշմանն:

*Բնության հատուկ պահպանվող տարածքների ցանկ*

ԲՀՊՏ-ի անվանումը	Ստեղծման տարեթիվը	Զբաղեցրած տարածքը	Տեղադիրքը	Պահպանման օբյեկտը	Հեռավորությունը Ծաղկաձորից, հազ. մ
«Արգաքանի և Մեղրաձորի» պետական արգելավայր	1971	13532 հա	Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններ 1600-2100մ. բարձր. վրա	Հազվագյուտ և արժեքավոր կենդանիներ /այծյամ, ազնվացեղ եղջերու, գորշ արջ/	2.0 – 2.5
«Բանքսի սոճու» պետական արգելավայր	1958	4 հա	Հրազդանի շրջանի մարմարիկ գետի ավազան, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջեր, 1800-2000 մ.բարձ. վրա	Բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակ	3.0 – 3.2

Ինչպես երևում է աղյուսակից, նշված ԲՀՊՏ-ները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա և չեն կարող ենթարկվել նրա ազդեցությանը:


**4.10 Պատմության և մշակույթի հուշարձաններ**

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 85 հուշարձան (16 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Կեչառեցու փող. 51	—	6.5/1	S	
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Չարենցի փող. 34	—	6.5/2	S	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	19 դ. վերջ- 20 դ. սկիզբ	Չարենցի փող. <b>62</b>	—	<a href="#">6.5/3</a>	S	
<a href="#">Թանգարան Օրբելի եղբայրների</a>		քաղաքի կենտրոնում	—	<a href="#">6.5/4</a>	Հ	
<a href="#">Հուշարձան Լևոն, Հովսեփ և Ռուբեն Օրբելի եղբայրներին</a>	1997 թ.		—	<a href="#">6.5/4.1</a>	S	քանդ.՝ Ա. Հովսեփյան ճարտ.՝ Ռ. Ջուլիհայկյան
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, Ս. Մաշտոցի անվան ճամբարի մոտ	—	<a href="#">6.5/5</a>	Հ	
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, Նարեկի ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր մոտ	—	<a href="#">6.5/6</a>	Հ	
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր տարածքում	—	<a href="#">6.5/7</a>	Հ	
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր տարածքում	—	<a href="#">6.5/8</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի ամ եզրին, Եղնիների բացատում	—	<a href="#">6.5/9</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.	Գրողների միության ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի	—	<a href="#">6.5/10</a>	Հ	



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		համալիր տարածքում				
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի մեջ, Ս. Մաշտոցի անվան Ճամբարի մոտ	—	<a href="#">6.5/11</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.	«Արցախ» ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր մոտ	—	<a href="#">6.5/12</a>	Հ	
Խաչքար Ապուտասիլի	1255 թ.	«Մոր և մանկան» ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր բակում	—	<a href="#">6.5/13</a>	Հ	
Խաչքար	13 դ.	Նախարարների խորհրդի ժամանակակից հյուրանոցային, սպորտի, հանգստի եվ ժամանցի համալիր տարածքում	—	<a href="#">6.5/14</a>	Հ	
<a href="#">Վանական Համալիր Կեչառիս</a>	11-13 դդ.	քաղաքի հս-ամ մասում	 <a href="#">40.532358° հս. լ.</a> <a href="#">44.719 644' ավ. ե.</a>	<a href="#">6.5/15</a>	Հ	
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	1003 թ.		—	<a href="#">6.5/15.1</a>	Հ	կառուցել է Գր. Մագիստրոս Պահլավունին
Եկեղեցի Սբ. Նշան	11 դ.	Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցուց հվ	—	<a href="#">6.5/15.2</a>	Հ	
Եկեղեցի Սբ. Կաթողիկե	1203-1214 թթ.		—	<a href="#">6.5/15.3</a>	Հ	
Գավիթ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու	12 դ. վերջ	կից է եկեղեցուն ամ-ից	—	<a href="#">6.5/15.4</a>	Հ	
Խաչքար	12 դ.		—	<a href="#">6.5/15.4.1</a>	Հ	
Խաչքար	1214 թ.		—	<a href="#">6.5/15.4.2</a>	Հ	արձանագիր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Եկեղեցի	5 դ.		—	<a href="#">6.5/15.5</a>	Հ	
Մատուռ	13 դ.		—	<a href="#">6.5/15.6</a>	Հ	
Մատուռ	13 դ.		—	<a href="#">6.5/15.7</a>	Հ	
Գերեզմանոց	11-17 դդ.	համալիրի տարածքում	—	<a href="#">6.5/15.8</a>	Հ	
Խաչքար	11 դ.		—	<a href="#">6.5/15.8.1</a>	Հ	
Խաչքար	11 դ.		—	<a href="#">6.5/15.8.2</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.3</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.4</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.5</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.6</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.7</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	<a href="#">6.5/15.8.8</a>	Հ	
Խաչքար	12 դ.		—	<a href="#">6.5/15.8.9</a>	Հ	
Խաչքար	12 դ.		—	<a href="#">6.5/15.8.10</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.11</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.12</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.13</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.14</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.15</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.16</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.17</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.18</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.19</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.20</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.21</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.22</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/15.8.23</a>	Հ	
Խաչքար Աղալարի	1252 թ.	Վեցիկ ճարտարապետի խաչքարի մոտ	—	<a href="#">6.5/15.8.24</a>	Հ	արձանագիր
Խաչքար Գրիգոր Եպիսկոպոսի և Մահակի	1574 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	<a href="#">6.5/15.8.25</a>	Հ	արձանագիր
Խաչքար Դեղկրոնա	1220 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	<a href="#">6.5/15.8.26</a>	Հ	արձանագիր
Խաչքար Յոհաննեսի	1251 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	<a href="#">6.5/15.8.27</a>	Հ	արձանագիր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար Յովհաննես քահանայի	1251 թ.	համալիրի ցանկապատի հվ պատի մոտ	—	<a href="#">6.5/15.8.28</a>		պահպանվել է արձանագիր պատվանդանը
Խաչքար Մարգսի	13 դ.	Մբ. Նշան և Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների միջև	—	<a href="#">6.5/15.8.29</a>	Հ	արձանագիր
Խաչքար Վահրամի	1248 թ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	<a href="#">6.5/15.8.30</a>	Հ	արձանագիր, հատված
Խաչքար Վեցիկ ճարտարապետի	13 դ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	<a href="#">6.5/15.8.31</a>	Հ	արձանագիր
Խաչքար	13-14 դդ.		—	<a href="#">6.5/15.8.32</a>	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	<a href="#">6.5/15.8.33</a>	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	<a href="#">6.5/15.8.34</a>	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	<a href="#">6.5/15.8.35</a>	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	<a href="#">6.5/15.8.36</a>	Հ	
Խաչքար	16-17 դդ.		—	<a href="#">6.5/15.8.37</a>	Հ	
Կոթող	6-7 դդ.		—	<a href="#">6.5/15.8.38</a>	Հ	
Տապանաքար Աբրահամ քահանայի	1273 թ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.39</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Գրիգոր Մարկավագի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.40</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Ելբեքի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.41</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Լաշքաբեի	1221 թ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.42</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Մարիամի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.43</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Սիմեոն վարդապետի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.44</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Վասակի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.45</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Վարդան Քահանայի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.46</a>	Հ	արձանագիր
Տապանաքար Սեդրակ Քահանայի	1355 թ.	եկեղեցու մուտքի առջև	—	<a href="#">6.5/15.8.47</a>	Հ	արձանագիր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Եկեղեցական համալիր Սբ. Հարություն	1220 թ.	Կեչառիս վանական համալիրից 120 մ ամ	—	<a href="#">6.5/16</a>	Հ	
Գավիթ	13 դ.	կից է եկեղեցուն ամ-ից	—	<a href="#">6.5/16.1</a>	Հ	
Գերեզմանոց	12-16 դդ.	եկեղեցու շուրջը	—	<a href="#">6.5/16.2</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.1</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.2</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.3</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.4</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.5</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">6.5/16.2.6</a>	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	<a href="#">6.5/16.2.7</a>	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	<a href="#">6.5/16.2.8</a>	Հ	
Տապանաքար Գրիգորի, Մարգսի	16-17 դդ.		—	<a href="#">6.5/16.2.9</a>	Հ	

**4.11 Աղմուկ և թրթռում:**

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԿԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքը կազմում է 1618.29հա, որից բնակավայրի տահմաններում՝ 162.71հա, ըստ գլխավոր հատակագծի՝ համայնքի վարչական տարածքը մնում է անփոփոխ:

**5.1 Բնակչություն**

Ծաղկաձոր համայնքի բնակչությունը կազմում է 1489 մարդ, համաձայն Կոտայքի մարզպետարանի կայքէջի: Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 1650 մարդ: Համայնքում սկսել են բնակություն հաստատել դեռևս III-V դարերում: Ազգային առումով այն միատարր է (հայեր՝ 95.2 %, եզդիներ՝ 3.2%, ռուսներ՝ 1%, այլ ազգիների ներկայացուցիչներ՝ 0.6%): Բնակչության ընդհանուր թվում կանայք կազմում են 48%, տղամարդիկ՝ 52.0%:

**Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները**

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1503	721	782
	Մինչև 18 տարեկան	252	121	131
	18-45 տարեկան	784	376	408
	45-63 տարեկան	383	184	199
	63 և ավել տարեկան	121	58	63
2	Կենսաթոշակատուներ (ներառյալ հաշմանդամներ)	223	133	90
3.	Զբաղվածների թիվը, որից	702	418	284
	Շինարարական ոլորտում	21	0	21
	Առևտրի ոլորտում	82	70	12
	Սպասարկման ոլորտում	394	250	144
	Այլ ոլորտներում	205	98	107

Աշխատունակ տղամարդկանց և կանանց մեծ մասը աշխատում են հիմնականում սպասարկման ոլորտում:

**Համայնքի բնակչության փոփոխությունների ցուցանիշները**

Տարի	1873	1897	1926	1939	1959	1976	1989	1991	2001	2004	2015	2018
Բնակչություն	169	345	618	654	1029	2000	3350	2900	1618	1600	1200	1503

**5.2 Բնակելի կառուցապատում**

Նախկինում ձևավորված լանդշաֆտի առանձնահատկությունների հիման վրա Ծաղկաձոր համայնքի տարածքում պայմանավորել է կառուցապատման առկա վիճակը: Ծաղկաձոր

համայնքը հիմնականում կառուցապատված է 1 – 2 հարկանի (գերակշռում են երկու հարկանի) քարե պատերով, ավանդական շարվածքով, ուղիղ շարվածքի տուֆ քարերով, թիթեղյա կամ ասբոշիֆերի ծածկ ունեցող տներով: Համայնքի կենտրոնը ձևավորված է բնակավայրի արևելյան հատվածում, որտեղ գտնվում են քաղաքապետարանը, փոստը, Օրբելի եղբայրների թանգարանը և համայնքի հասարակական կենտրոնը:

### 5.3 Հասարակական սպասարկման համակարգ

Քաղաքում գործում է մեկ միջնակարգ դպրոց 134 աշակերտով: Դպրոցը վերանորոգված է, ունի ջեռուցման լոկալ համակարգ:

Գործում է <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ը, որը վերանորոգված է:



Քաղաքային գրադարանը գտնվում է առանձին շենքում, որը ունի մոտ 15 000 կտոր գրականություն, սպասարկում է ինչպես քաղաքի ազգաբնակչությանը, այնպես էլ հանգստացողներին: Գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման լուրջ համակարգով:

Քաղաքում գործում է հանրապետության գլխավոր մարզահամալիրը և լեռնադահուկային մանկապատանեկան հանրապետական մարզադպրոցը, Հայաստանի շախմատի ակադեմիայի մեկ դասարան:

Համայնքում սպորտի հետագա զարգացմանը աջակցելու համար անհրաժեշտ է զարգացնել նաև այլ սպորտաձևեր՝ լող, ֆուտբոլ, թենիս, բասկետբոլ, ըմբշամարտ և երիտասարդների ներգրավել նաև այս սպորտաձևերում և հասնել մեծ հաղթանակների :



Գլխավոր սպորտային համալիր



Գլխավոր մարզահամալիր

Համայնքում հիմնականում զարգանում է զբոսաշրջությունը, առևտրի և սպասարկման ոլորտը, հյուրանոցային համալիրների գործունեությունը, առողջարանային,ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեություն:

Քաղաքում գործում է Օրբելի եղբայրների տուն – թանգարանը: Օրբելի եղբայրների տուն – թանգարանը վերանորոգվել է 2010թ., գտնվում է լավ վիճակում և իրականացնում է բազմաթիվ միջազգային, հանրապետական և մարզային ծրագրեր, ծավալում է նաև հրատարակչական գործունեություն:



Օրբելի եղբայրների հուշարձան



Գրողների տուն

Համայնքում է գտնվում է Կեչարիս վանական համալիրը, որը կառուցվել է 995 – 1003 թվականներին Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի կողմից:



Ծաղկաձոր քաղաքն այսօր ակտիվորեն զարգանում է: Քաղաքի մշակութային և ազատ ժամանցի կազմակերպման գործում կարևոր տեղ կզբաղեցնի քաղաքային զբոսայգին, որի կառուցման աշխատանքներն արդեն ավարտվել են: Զբոսայգին գտնվում է համայնքի բնակավայրի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 3.0 հա հողատարածք: Զբոսայգուն կից գործում է «Զիպ Լայն Ծաղկաձոր» արշավների ակումբը, որտեղ իրականացվում են թռիչքներ 480-630 մ բարձրության վրա: Այն մեծ պահնջարկ ունի զբոսաշրջիկների մոտ:

Քաղաքային հանգստի գոտիներից են «Ծաղկունյաց» հրապարակը, 1 մանկական խաղահրապարակը:

Ծաղկաձոր համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: «Կեչարիսի վանքային համալիրը» Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդանիստ եկեղեցի է, որը կառուցվել է 995 – 1003 թվականներին Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի կողմից: Այդ համալիրը նույնպես խթան է առաջացնում տուրիզմի զարգացմանը:

Ծաղկաձոր համայնքը համարվում է միջազգային չափանիշների համապատասխան զբոսաշրջության կենտրոն:

#### 5.4 Տնտեսության ոլորտները

Ծաղկաձոր համայնքը համարվում է միջազգային չափանիշների համապատասխան զբոսաշրջության կենտրոն: Այն գրավիչ է ոչ միայն Հայաստանի նաև այլ երկրների զբոսաշրջիկների համար:

Քաղաքը շնորհիվ բնական դիրքի և մեղմ կլիմայի հանդիսանում է հիմնականում հանգստի գոտի: Բնակչությունը հիմնականում զբաղված է սպասարկման ոլորտի՝ հանգստյան տների, հյուրանոցների աշխատանքներում և հետագայում ևս տնտեսության այս ուղղվածությունը շարունակվելու է: Այստեղ տնտեսվարում են մոտ երեք տասնյակ սուբեկտներ: Քաղաքն ունի նաև 15 առևտրի և հասարակական սննդի սպասարկման օբյեկտներ: Այս ոլորտում իրականացվող աշխատանքների մեջ կարևորվում է սպասարկման ոլորտում նոր կադրերի կրթության գործը:

Համայնքում չեն գործում գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկություններ: Սակավ են գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ իսկ պատճառով գյուղատնտեսական ոլորտում զբաղվածությունը մինիմալ է:

**6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**6.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**6.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**6.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**6.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել շին. հրապարակի և մոտեցնող ճանապարհների ջրցան,
- նախատեսել պաշտպանիչ ցանց
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:
- Տեխնիկական միջոցների սպասարկումը իրականացնել բացառապես մասնագիտացված կայաններում

### 6.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող հոսքաջրերը, շինարարական տեխնիկայի անվադողերի լվացումից առաջացած հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը նախատեսվում է շինարարական հրապարակի տարածքում, իրենից ներկայացնում է պլաստմասե 25իւմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:
- Առաջնորդվել ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N64-Ն որոշման 7-րդ կետի գ) ենթակետով:

### 6.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
  - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
  - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
  - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
  - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել **2** տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
  - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև **20** տարի:
  - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

**6.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

- Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝
- Հրդեհի առաջացումը
  - Հեղուկ նյութերի արտահոսքը
  - Աշխատողների վնասվածքները
  - Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 6.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

### 6.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

### 6.3.7 Կենսաբազմազանություն

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է:

Ըստ նախնական գնահատումների նշված տարածքում թե կենդանական, և թե բուսական աշխարհի ներկայացուցիչների վրա ազդեցություն չի լինելու: Այդ իսկ պատճառով լրացուցիչ կենսաբազմազանության մշտադիտարկումներ չի նախատեսվում:

### 6.3.8 Թափոնների կառավարում

Համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

- Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր, կամ կրկնակի օգտագործվեն:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**6.3.9 Տարածքի բարեկարգում կանաչապատում**

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգելն կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի ավտոմատներով: Կանաչապատվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**6.3.10 Էներգախնայողության միջոցառումներ**

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:

- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

**7. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ**

Բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
6. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
7. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվում է մասնահանել 3350 հազ. դրամ:

Մշտադիտարկումների իրականացման պլան, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով		550000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	28x40000	1120000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ	28x30000	840000



հաճախականությամբ:		
Հողերի արտոտվածության մշտադիտարկումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	28x30000	840000
Ամբողջ շինարարության համար		3350000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
